ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2012թ հունվարի 12 **թիվ 4-Ա**

ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՀՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի "Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին"ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.14-րդ կետերի պահանջներով՝ ***կարգադրում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային աշխատանքները կազմակերպելու և վերահսկելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝
   1)Ամենօրյա հսկողություն սահմանել մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային աշխատանքների ընթացքին և պարբերաբար զեկուցել մարզպետին:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ Մ.Առաքելյանի վրա:
4. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզպետի
2012թ. հունվարի 12-ի թիվ 4-Ա
կարգադրության

ԿԱԶՄ

ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Մ.Առաքելյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Խ.Ալիյան – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
Հ.Ղոնախչյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ
Կ.Տոնոյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական
Ա.Ղազարյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջին կարգի մասնագետ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**